

նա վասն կսկծանաց եղբորն ժողովեաց բազում քուրտ եւ զոմանս ի էնկշարիցն սպանեց ի գեղջիցն Սիմայու: Եւ ժողովեաց բազում զօրս քրտաց եւ անուանեցաւ Սարտար Մահմուտ, եւ գեղորէից բնաւին վնաս ոչ առնէր. բայց յէնկիշարիցն եւ զճանապարհորդացն առնէր զվրնասն» («Ժամանակագրութիւն», էջ 33):

Դարանաղցին իր «Ժամանակագրութեան» մէջ հետաքրքրական դրուագ մը կը պատմէ, որ շատ յատկանշական է հայոց բռնած զիրքի տեսակէտէն: Սերաստիայի թուրք փաշան մեծ թուով զօրք կը հաւաքէ եւ ապստամբ քիւրտ Ազիճու վրայ կը քայլէ, բայց կը պարտուի ու կը վերադառնայ Սերաստիա: Ապստամբ քիւրտները Ազիճու ղեկավարութեամբ կը հետապնդեն թրքական ուժերը մինչեւ Սերաստիա եւ քաղաքը կը պաշարեն: Թուրք փաշան կը հրամայէ քաղաքի թուրքերուն եւ հայերուն որ ոտքի ելնեն եւ օղնեն թրքական զօրքին: Հայերը իրենց վախէն կը հնազանդին փաշայի հրամանին եւ կը կուռնին քիւրտերուն դէմ: Սակայն, «վասն մեղաց մերոց, կոտորեցին զօրսն փաշային եւ զինքն ի փախուստ դարձուցին» (Դարանաղցի, էջ 26) ու գրաւեցին Սերաստիան, կոտորելով թէ՛ հայերը եւ թէ՛ թուրքերը, խնայելով միայն աղջիկներուն եւ կանանց, որոնց ձեռք դպցնելը մահուան պատիժով արգելուած էր:

Մինչդեռ, ասոկէ առաջ, նոյն ապստամբ Ազիճու մասին, Դարանաղցին կը վկայէ որ հայերուն, աչքատ ժողովրդին եւ ճամբորդներուն վնաս չէր հասցներ, այլ կը կուռէր ենիշէրիններու եւ կառավարութեան դէմ: Հայերը կը բռնէին ուժեղի կողմը, թրքական պետութեան հզօրութեան ապաւինելով, ու այդ պատճառով կը կոտորուէին Սերաստիոյ մէջ քիւրտերէն, որոնք ժամանակաւորապէս յաղթական էին:

Հայերու օրինաբարսիւնը Դարանաղցու արտայայտութենէն պարզ կ'երեւի, — «վասն մեղաց մերոց» թուրքերը պարտուեցան: Ուրեմն հայերը կը բաղձային տեսնել թուրքերը յաղթական: Եւստ մը պարագաներու մէջ, երբ Ջալալիներով (մեծամասնութեամբ քիւրտ ապստամբներ) հաւածանքը կը յաջողի, Դարանաղցին գոհունակութեամբ կ'արձանագրէ գէպը: Որով պարզ է թէ հայերը, միջին այդ

նահանդներու մէջ, 16-րդ դարու վերջերը եւ 17-րդ դարու սկզբները, պահպանելով զբացիական բարեկամութիւն քիւրտերուն հետ, քաղաքականորէն եւ ապահովութեան տեսակէտէն՝ համակիր էին թուրք կառավարութեան, միշտ յուսալով թէ պետութիւնը պիտի կրնայ իրական իշխանութիւն մը ստեղծել եւ համեմատական խաղաղութիւն մը տալ հայ ժողովուրդին: Սարուսիկ յոյս, որ երբեք չիրականացաւ թուրքիոյ մէջ:

Քիւրտերու վարժունքը հայերու հանդէպ, յամենայն դէպս, աւելի լաւ եղած է, քան թուրք տարրի եւ մանաւանդ իշխանութեան վարժունքը: Սակայն քիւրտերու բարեկամական վերաբերմունքը հետեւողական եւ տեսական եղած չէ: Քաղաքական դաշնակցութեան մը բացակայութեան, հետզհետէ շեշտուող կրօնական տարբերութիւնը (քիւրտերը կամաց կամաց իւրացուցին մահմետական կրօնի մոլեռանդութիւնը. եւ շատ վայրեր, որոնք հնու եւ թրքական եւ արաբական կեդրոններէ, մինչեւ հիմա ալ մահմետական մոլեռանդութենէ հեռու են.) եւ անիշխանական շարժումները պատճառ դարձան որ հայերը, երբեմն երբեմն գոհ երթային քրտական արշաւանքներու: Այսպէս, մենք կը հանգիպինք շարք մը վկայութիւններու, որոնք կը հաստատեն թէ քիւրտերը շատ չարիքներ հասցուցած են հայ ժողովուրդին, եւ հակառակը, բազմաթիւ դժուրութեանց յիշատակութիւններ ալ կան, որ կը վկայեն թէ հայերն ու քիւրտերը, ըստ էութեան բարեկամ ժողովուրդներ եղած են:

Կ'արժէ քանի մը օրինակներ այստեղ յիշատակել: Դարանաղցին իր ժամանակակից պատմութիւնը, որպէս ականատեսի՝ գրի առնելով (1590-1646) «Ժամանակագրութեան» մէջ կ'արձանագրէ որ Երկանի վանքերը անցեալի մէջ աւերուած են Ջալալիներու կողմէ, որոնք հրդեհ ձգած եւ բոլոր շինութիւնները այրել են. (նոյն գիրք, էջ 405):

Այս վկայութեան կողքին, նոյն գրքի յաւելուածի էջ 596-597-ի մէջ կը կարդանք հետեւեալ հետաքրքրական պատմութիւնը. —

Քիւրտ աւազակախումբ մը կը մտնէ Սեպուհ լեռան վանքերն ու ճգնարանները. քիւրտերը կը կողոպտեն բոլոր սաղմոսները, գրը-